ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2018թ. թիվ 38-Ա

Ա. ԾԱՏԻՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34 կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Կարապետ Դոլինյանի անվան N 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 2018 թվականի փետրվարի 9-ի գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Անահիտ Երվանդի Ծատինյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Կարապետ Դոլինյանի անվան N 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2018 թվականի փետրվարի 13-ից:

2. Ա.Ծատինյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 12
ք.Վանաձոր